ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էդմոնդ Հովհաննիսյան Վահեի Ա/Ձ-ն ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/66 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Boob Manufactures	Համազգեստը բաղկացած է բաճկոնից, տաբատից, կեպիից, ներքնաշապիկից, սվիտերից: Կտորի բաղադրությունը 35±2% բամբակ, 65±2% պոլիէսթեր (կտորի խտությունը՝ 220±10գր/մ2): Բաճկոնի առաջամասերը և կոկետկան մշակվում են 100% բամբակ բաղադրությամբ, 130±10% գ/մ2 մակերեսային խտությամբ բամբակյա աստառով: Ներսում տեղադրված է ծոցագրպան, որի մուտք մշակվում է հիմնական կտորից եզրաքուղով: Բաճկոնի կոճկումն իրականացվում է պաշտպանիչ կափույրի տակ թաքնված նեյլոնե շղայով: Կափույրը ամրանում է առաջամասին 3 հատ մետաղական կոճգամներով կամ 7 սմ երկարությամբ երեք հատ կպչունային ժապավեններով: Գոտին մեկ առանձին կտորից գոտեմասով: Թևքերի թեզանիքը կոճկվում է 2 օղակ/կոճակով: Բաճկոնի առաջամասերի ներքևում մշակվում է թեք ներկարված գրպաններ՝ մշակված 100% բամբակ բաղադրությամբ, 130±10% գ/մ2 մակերեսային խտությամբ բամբակյա աստառով: Կրծքամասում արտաքին ձևավոր կափույրով, կոճակով կոճկվող գրպաններով: Բաճկոնի օձիքը հետծալված: Բաճկոնի կողային մասերը ունի 12 – 18 սմ երկարությամբ առաձգական ժապավեն: Բաճկոնի հետևամասը բաղկացած է 2 կտորից: Առջևի աջ գրպանի վերևի մասում ամրացվում է «ՈՒԱԿ»-ի տարբերանշանի ասեղնագործությամբ արհեստական թավշյա /искусственная замша/ կտոր, թիկունքին «ՈՒԱԿ»-ի տարբերանշանի

		ասեղնագործությամբ արհեստական թավշյա /искусственная замша/ կտոր: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է «ՈՒԱԿ»-ի տարբերանշանի թևքանշանը ասեղնագործված արհեստական թավշյա /искусственная замша/ կտորի վրա՝ բաղկացած է 2 մասից, կողային մասերը մշակված կարմիր գույնի՝ փակ եզրակարով: Ուսադիրները գունաքողարկվող կտորից, բաճկոնի չափսի համապատասխան երկարությամբ և 45 մմ լայնությամբ՝ վրադիրներով: Ձախ գրպանի վերևի մասում 70 մմ բարձրության վրա կարված է կտորից օղակ կրծքանշանի համար, 20 մմ երկարությամբ, 10 մմ լայնությամբ: Տաբատը ՝ ուղիղ ուրվագծով: Գոտին՝ գոտեմակօղերով, կոճկվում է կոճակով և շղթայով: Կողային հատվածներում մշակվում են թեք ներկարված գրպաններ՝ մշակված 100% բամբակ բաղադրությամբ, 130±10% գ/մ2 մակերեսային խտությամբ բամբակյա աստառով: Հետևամասի աջ կողմում կոճակով կոճկվող կափույրով ներկարված գրպան: Կեպին – բաղկացած է կոշտ հովհարից, կողամասերից և հատակից, 7 սմ բարձրությամբ: Հետևամասում առաձգական ժապավեն: Աստառը՝ բամբակյա կտորից: Չափսերը՝ հասակային, սանդղակը՝ 48-66, քանակներն՝ ըստ պատվիրատուի պահանջի: Ներքնաշապիկ՝ (մայկա սև) ուղիղ ձևվածքով է, սև գույնի 100% բամբակյա գործվածքից 140-150 գ/մ2 խտությամբ, կարճաթև, կլոր օձիքով: Չափսերը՝ հասակային, սանդղակը՝ 48-64, քանակներն՝ ըստ պատվիրատուի պահանջի: Սվիտեր՝ սև 50% բուրդ, 50% ակրիլ գործվածքից, օձիքը՝ շրջանաձև բացվածքով, հավաքովի գործվածքով: Ձախ կրծքավանդակին առկա է շերտակարով, վրադիր կափույրով, կոճկվող գրպան: Մեջքի հատվածում ասեղնագործած «ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» տարբերանշանը Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Эдмонд Оганесян Вагеевич И/П в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/66 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
1		